

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՓՐԿՕՂԱԿ

Հիմնաբառեր. *կոոպերատիվ, օրենք, ներդրող անդամ, հողերի միավորում, ծառայություններ*

Սամվել ԱՎԵՏԻՍՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

1978 թ. գերազանցությամբ ավարտել է ՀԳԻ տնտեսագիտական ֆակուլտետը, աշխատել արտադրությունում և սովորել ասպիրանտուրայում: 1990 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի, 2003 թ.՝ դոկտորի գիտական աստիճան, 2007 թ.՝ պրոֆեսորի գիտական կոչում: 1999 թ. ընտրվել է ՀՀ ԱԺ պատգամավոր: 2002-2011 թթ. աշխատել է ՀՀ գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ: 2013 թ.-ից առայսօր աշխատում է ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնում՝ զբաղեցնելով տնօրենի և սոցիալ-տնտեսական ծրագրերի համակարգողի պաշտոնները: Ներկայում պաշտոնավարում է որպես ավագ փորձագետ: Հեղինակ է շուրջ 140 գիտական հոդվածների, 16 մենագրությունների և ուսումնական ձեռնարկների:

Մոտ երեք տասնամյակ է անցել Հայաստանում իրականացված ագրարային վերափոխումներից: Մասնավորեցման շնորհիվ՝ մեծացել է հողի սեփականատերերի թիվը: Սակայն, մեծաքանակ ընտանեկան գյուղացիական տնտեսությունների ձևավորման, հողակտորների փոքր չափերի ու կտրտվածության պատճառով խախտվել են ցանքաշրջանառության, ոռոգման, մթերման, նյութատեխնիկական, ֆինանսական և մասնագիտական սպասարկման համակարգերը, իջել է գյուղատնտեսական արտադրության արդյունավետության մակարդակը: Եվ այս ամենն առավել սրությամբ է դրսևորվել Հայաստանի նման սակավահող և արտաքին հաղորդակցության ուղիների սահմանափակումներ ունեցող երկրում:

Ներկայացվող հոդվածում շեշտադրվում է այն գաղափարը, որ վերոնշյալ հիմնախնդիրները հնարավոր է լուծել գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորման և փոքր գյուղացիական տնտեսությունների միավորման եղանակով: Հեղինակը, վկայակոչելով միջազգային փորձը, բացահայտում է կոոպերացիայի միջոցով նշված հիմնախնդիրների լուծման ու ճգնաժամային երևույթների հաղթահարման կառուցակարգեր, վերլուծում կոոպերատիվների կազմավորմանը խանգարող գործոններն ու նոր պայմաններում առկա հնարավորությունները:

Հայաստանի Հանրապետությունում ագրարային ոլորտի վերափոխումներից հետո ի հայտ եկան բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնք անցած երեք տասնամյակում տակավին չեն լուծվել: Այդ հիմնախնդիրները գյուղատնտեսության ոլորտի տեխ-

նիկական հետամնացության, ճյուղի ցածր եկամտաբերության, վարելահողերի շուրջ 30%-ի և արոտավայրերի ավելի քան 50%-ի ոչ լիարժեք օգտագործման, խաղողի և պտղատու այգիների տարածությունների կրճատման, ոռոգման ջրի 60-70% կորուստների, գյուղատնտեսական արտադրանքի իրացման և անհրաժեշտ ներդրանքների մատակարարման դժվարությունների, վերջապես՝ գյուղական բնակչության աղքատության և արտագաղթի հիմնական պատճառն են:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հողի մասնավորեցումը, որի շնորհիվ մեծանում է հողատերերի թիվը, սոցիալական արդարության սկզբունքը պահպանելու հետ միասին, անխուսափելիորեն փոխում է գյուղատնտեսության կառուցվածքը: Մեծ թվով ընտանեկան գյուղացիական տնտեսությունների ձևավորման և հողակտորների փոքր չափերի ու կտրտվածության պատճառով խաթարվում են ցանքաշրջանառության, ոռոգման, մթերման, նյութատեխնիկական, ֆինանսական և մասնագիտական սպասարկման համակարգերը, սահմանափակվում երկրի պարենային անվտանգության հնարավորությունները: Սա առավել սրությամբ է դրսևորվել հատկապես Հայաստանի նման սակավահող և արտաքին հաղորդակցության ուղիների սահմանափակումներ ունեցող երկրում: Ուստի, մեր կարծիքով, ի թիվս այլ գործիքների, այս հիմնախնդիրները կարող են լուծվել գյուղատնտեսական կոոպերատիվների և փոքր գյուղացիական տնտեսությունների միավորման եղանակով:

Միանգամայն հիմնավորված է հետևյալ եզրակացությունը. «Կոոպերատիվները հնարավորություն են ստեղծում լուծելու գյուղացիական տնտեսությունների արտադրական, մատակարարման, իրացման, ինչպես նաև հողաբաժինների կտրտվածության, փոքրության, սահմանափակ ռեսուրսների և ենթակառուցվածքների և այլնի հետ կապված խնդիրները: Բացի այդ, ի թիվս այլոց, կոոպերատիվները նպաստում են գյուղատնտեսությունից ստացվող եկամուտների աճին, գիտելիքների և հմտությունների բարելավմանը, ֆինանսական ռեսուրսների հասանելիության բարելավմանը, աշխատատեղերի ստեղծմանը և ֆերմերների իրավունքների պաշտպանությանը»[1]: Այսպիսի պնդման համար կարևոր է գյուղատնտեսության զարգացման ինչպես միջազգային, այնպես էլ հայրենական փորձի ուսումնասիրությունը:

Ներկայում առաջատար գյուղատնտեսություն ունեցող գրեթե բոլոր երկրներում զարգացած են գյուղատնտեսական կոոպերացիայի տարբեր ձևերը: Ահավասիկ, Արևմտյան Եվրոպայում, հատկապես՝ սկանդինավյան երկրներում, ԱՄՆ-ում, Ճապոնիայում, Հարավային Կորեայում, Չինաստանում և Իսրայելում կոոպերացիան գյուղատնտեսական արտադրության կազմակերպման առանցքային սկզբունքն է:

Դիտարկենք ՀՀ գյուղատնտեսության առավել մտահոգող հիմնախնդիրները, որոնց լուծման լավագույն ձևը գյուղատնտեսական կոոպերատիվներն են:

Գյուղատնտեսական հողատեսքերի արդյունավետ օգտագործում

ՀՀ գյուղատնտեսության գլխավոր հիմնախնդիրներից է հողային ռեսուրսների օգտագործման չափազանց ցածր մակարդակը: Բավական է նշել, որ ՀՀ մարզերում արոտավայրերի ավելի քան կեսը և վարելահողերի 35-60%-ը նպատակային չեն օգտագործվում: Ավելին, վարելահողերի 15-20 տոկոսն այսօր փաստացի սեփականատեր չունի, դրանց տերերին դժվար է գտնել, քանի որ նրանք կամ մեր երկրի քաղաքացիներ չեն, կամ էլ մահացել են՝ առանց այդ հողերը որևէ մեկին ժառանգելու[2]: Այս հիմնախնդրի պատճառները և լուծումները տարբեր են, բայց քանի որ հիմնական պատճառը հողակտորների մեծ թիվն ու փոքր չափերն են, ինչպես նաև

[1] Հետազոտություն գյուղատնտեսական կոոպերատիվների գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտի և գյուղատնտեսական կոոպերատիվների աջակցության պետական ծրագրի վերաբերյալ, էջ 3, file:///C:/Users/User/Downloads/Agri-Cooperatives_Research_report_0.pdf

[2] https://armenpress.am/arm/news/974525.html

մեկ սեփականատիրոջը բաժին ընկած 2-3 տարբեր հեռավորությամբ հողամասերը, հետևաբար՝ խելամիտ լուծումը հողերի միավորումն է:

Գյուղատնտեսական կոոպերատիվները լավագույն հնարավորությունն են ինչպես փոքր հողակտորների միավորմամբ համատեղ մշակության կազմակերպման, այնպես էլ սեփականատերերի բացակայության պատճառով անմշակ հողակտորները գյուղատնտեսական շրջանառության մեջ ներգրավելու առումով: Վերջինիս համար իրական հիմք է ստեղծում 2015 թ. դեկտեմբերի 21-ին ընդունված՝ «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքը, որի 12-րդ հոդվածի համաձայն՝ կոոպերատիվը կարող է ունենալ ներդրող անդամ, որն ունի խորհրդատվական ձայնի իրավունք, չի օգտվում կոոպերատիվ գործարքներից և, որպես փոխհատուցում, իր ներդրած կապիտալի համամասնությամբ կարող է ստանալ մասնաբաժին[3]: Այս դրույթը հնարավորություն է ընձեռում գյուղից տևական ժամանակով բացակայող և հողերն անմշակ թողած հողատերերին, պահպանելով կամավորության սկզբունքը, ընդգրկելու կոոպերատիվում՝ որպես ներդրող անդամ: Սա առավել կարճ ու արդյունավետ ճանապարհ է անմշակ հողերն օգտագործելու, հողի հարկի պարտքերը փակելու, կոոպերատիվի հողատարածությունը մեծացնելու և ամենակարևորը՝ հողերը միավորելու համար: Ի դեպ, կոոպերատիվների միջոցով նշված հիմնախնդիրների լուծման լավագույն օրինակներից է Ճապոնիայի փորձը:

Երկրորդ աշխարհամարտից հետո՝ 1945-1950 թթ., Ճապոնիայում իրականացվեցին լայնածավալ հողային բարեփոխումներ, որոնց արդյունքում գյուղացիական տնտեսությունների թիվը 1946 թ. 5698 հազարից, 1950 թ. հասավ 6176 հազարի կամ ավելացավ 8,4%-ով: Այդպիսով՝ 1 տնտեսության մշակվի հողերի տարածությունը միջին հաշվով կազմեց ընդամենը 8,24 տան (0,824 հա): Իսկ ավելի հստակ, մինչև 1 հա հող ունեին տնտեսությունների ընդհանուր թվի 62,5%-ը, ինչը հնարավորություն չէր տալիս կիրառելու մշակության արդյունավետ տեխնոլոգիաներ, ապահովելու բավարար եկամուտ և հաղթահարելու գյուղական աղքատությունը[4]: Այս պայմաններում հզոր տեմպերով զարգանում էին տնտեսության մյուս ճյուղերը և ավելանում աշխատուժի պահանջը: Գյուղացիները զանգվածաբար տեղափոխվում էին քաղաքներ: Հետաքրքրական է, որ մեկնողները, ի տարբերություն հայաստանյան փորձի, հողը վաճառելու կամ պարզապես անմշակ թողնելու փոխարեն, միավորվում էին գյուղատնտեսական կոոպերատիվներում և ցայսօր, պահպանելով հողի նկատմամբ սեփականության իրավունքը, ստանում են որոշակի շահաբաժին:

Տեղում կոոպերատիվների գործունեությանը ծանոթանալու համար ինձ հնարավորություն տրվեց 2004 թ. այցելելու Տոկիոյից ոչ շատ հեռու գտնվող Գումմա տարածաշրջանի Թաթեբայասիի քաղաքամերձ գյուղատնտեսական կոոպերատիվներից մեկը: Ավելի քան 4300 անդամ ունեցող այս կոոպերատիվն իրականացնում էր ինչպես արտադրական գործունեություն, այնպես էլ տեխնիկական սպասարկման, ապահովագրական, մարքեթինգային և խորհրդատվական ծառայություններ: Կոոպերատիվի նախագահը պատմեց, որ հիմնադրման առաջին տարիներին զբաղվել են միայն գյուղատնտեսությամբ, ավելի որոշակի՝ բրնձի, բաց և փակ գրունտի բանջարեղենի, ինչպես նաև ծաղիկների մշակությամբ, մինչդեռ ներկայում գյուղատնտեսությունից ապահովվում է կոոպերատիվի եկամտի միայն մեկ երրորդը: Պարզվեց, որ տարիների ընթացքում այնտեղ զարկ էր տրվել ագրովերամշակմանը, արտադրության գործիքների, ոռոգման խողովակների, ջերմոցային սարքավորումների, տարաների և այլ արտադ-

[3] «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենք, հոդված 12/6:
[4] Дружинин Н., Япония: экономическое чудо, СПб., Питер, 2003, стр. 65-66 и 251.

ռանքների արտադրությանը, մեծացել մատուցվող ծառայությունների ծավալը: Կոոպերատիվն ուներ արտադրական և սոցիալական զարգացած ենթակառուցվածքներ՝ վերամշակող արտադրամասեր, տեսակավորման և փաթեթավորման, ինչպես նաև բեռնափոխադրումների լոգիստիկ կենտրոն, մեծածախ և մանրածախ վաճառքի խանութներ, ցուցահանդեսային տաղավար և ուսումնական համալիր: Հետաքրքրական էր, որ կոոպերատիվի 4300 անդամից 650-ը մշտապես զբաղվում էր գյուղատնտեսական գործունեությամբ, իսկ մյուսները ներգրավված էին ոչ գյուղատնտեսական, հատկապես՝ արդյունաբերական և սպասարկման ոլորտներում: Կոոպերատիվի նախագահը նշում էր. «Ասոցիացված անդամների մեծ մասը, որոնք կոոպերատիվին են տրամադրել իրենց հողերը, վաղուց ապրում են տարբեր քաղաքներում և զբաղվում այլ գործունեությամբ: Մենք տարեվերջին հրապարակում ենք հաշվետվություն, տարեկան արտադրաֆինանսական արդյունքներով որոշում ներդրած միջոցի դիմաց նրանց հասանելիք շահաբաժինը և փոխանցում: Նրանցից ոմանք լիազոր ներկայացուցիչ ունեն, բայց հիմնականում մեր համագործակցությունը վստահության հիմքի վրա է կառուցվում»:

Այս փորձը ցույց է տալիս, որ ՀՀ-ում նույնպես կոոպերատիվները կարող են դառնալ հողօգտագործման ճգնաժամային իրավիճակի հաղթահարման փրկօղակ: Պարզապես անհրաժեշտ է նախաձեռնություն դրսևորել, ՏԻՄ-ի աջակցությամբ միավորել համայնքի ակտիվ անդամներին, կապ ստեղծել բացակայող հողատերերի հետ, ստանալ նրանց համաձայնությունը և, առանց ավելորդ ձգձգումների, հիմնադրել կոոպերատիվ՝ անմշակ հողերը պայմանագրային հիմունքներով հատկացնելով այդ կառույցին: Այստեղ, անհրաժեշտության դեպքում, չպետք է խուսափել նաև վարչարարության խստացումից: Առավել ևս, որ ՀՀ հողային օրենսգրքի 102-րդ հոդվածը սահմանում է, որ հողամասի նկատմամբ իրավունքների դատական կարգով հարկադիր դադարեցման հիմքեր են հողամասի օգտագործումը ոչ նպատակային նշանակությամբ, գյուղատնտեսական նշանակության հողամասը երեք տարվա ընթացքում չօգտագործելը, ինչպես նաև հողի հարկը երեք տարվա ընթացքում չվճարելը և չորրորդ տարվա ընթացքում պարտքը չմարելը[5]:

Մատչելի և բարձրակարգ արտադրատեխնիկական սպասարկում

ՀՀ գյուղատնտեսության բնականոն զարգացմանը խոչընդոտող հաջորդ հիմնախնդիրը, որի լուծմանը կարող են նպաստել գյուղատնտեսական կոոպերատիվները, արտադրատեխնիկական սպասարկումն է: Գյուղատնտեսության տեխնիկական ապահովվածության ներկա վիճակը, հատկապես՝ առկա տեխնիկայի ծայրաստիճան մաշվածությունը և նորացման անբավարար տեմպերը հիմք են տալիս կանխատեսելու, որ առաջիկա տասնամյակի վերջին վարելահողերի 45-50 տոկոսը չի ենթարկվի ինտենսիվ մշակության: Ուստի այս հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է յուրաքանչյուր տարի հանրապետություն ներմուծել 500 հատ տրակտոր, 40 հատ հացահատիկահավաք, 60 հատ կերահավաք կոմբայն և տրակտորների ագրեգատավորման առնվազն նվազագույն նորմերին բավարարող գյուղատնտեսական գործիքներ:

Մեր հաշվարկներով՝ այս քանակությամբ տեխնիկայի ձեռքբերման համար տարեկան անհրաժեշտ է մոտ 12-15 մլրդ դրամ: Պահանջվող ներդրումն այնքան էլ մեծ չէ, եթե նկատի ունենանք, որ միայն շուրջ 165 հազ. հա անօգտագործելի վարելահողերից (հիմնական պատճառներից մեկը տեխնիկայի անբավարարությունն է) տարեկան կորցնում ենք ավելի քան 200 մլրդ դրամի գյուղատնտեսական արտադրանք:

Գյուղատնտեսական տեխնիկայի, ինչ-

[5] ՀՀ հողային օրենսգիրք, հոդված 102:

պես նաև մյուս ներդրանքների ձեռքբերման և արդյունավետ օգտագործման կարևոր պայմաններ կարող են ստեղծել կոոպերատիվները, որոնց համար էական աջակցություն է նախատեսում ՀՀ կառավարության 2020 թ. մարտի 26-ի N356-Լ որոշմամբ հաստատված՝ «Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման երկրորդ միջոցառումը»: Բավական է նշել, այս ծրագրով զրոյացվում է գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքը, նոր վարկերը հատկացվում են անտոկոս, մայր գումարի մարման ժամկետը սահմանվում է մինչև 5 տարի, իսկ մայր գումարի մարման արտոնյալ ժամկետը՝ մինչև 6-12 ամիս[6]: Ավելին, այս միջոցառումն աննախադեպ նպաստավոր պայմաններ է ստեղծում գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացման համար, քանի որ վերջիններիս, բացի վարկավորման արտոնյալ պայմաններից, նաև համաֆինանսավորում է առաջարկվում: Այսինքն, վարկի նպատակից կախված, գումարի 10-70%-ը մարվում է պետական բյուջեի միջոցներից: Դիցուք՝ կոոպերատիվների համար գյուղատնտեսական տեխնիկայի և ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի (վարձակալության) գումարի 10%-ը, ոռոգման արդիական համակարգերի ներդրման, խաղողի և հատապտուղների ինտենսիվ այգիների հիմնադրման և կարկտապաշտպան ցանցերի ձեռքբերման գումարի 50%-ը, տոհմային տավարաբուծության և ոչխարաբուծության զարգացման ծախսերի 70%-ը համաֆինանսավորվելու են:

Մարքեթինգային, մասնագիտական և խորհրդատվական ծառայություններ

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ագրոպարենային ոլորտում ծառայությունների մատուցումը գերազանցապես կատարվում է աութսորսինգի (լիազորությունների պատվիրակման) եղանակով և կոոպերատիվների միջոցով:

Առաջին անգամ ծառայությունների մատուցման այդ համակարգին ականատես եղա ԱՄՆ-ի Այովայի նահանգի ֆերմերային տնտեսություններում: Երբ ֆերմերի հետ այցելեցինք եգիպտացորենի դաշտ, այնտեղ փորձնական բերքահավաք էին անցկացնում սպասարկող կոոպերատիվի մասնագետները: Պարզվեց, որ ֆերմերն այդ կոոպերատիվի անդամ է, որը նրա համար իրականացնում է բույսերի պաշտպանության և հողի պարարտացման խորհրդատվություն ու հիվանդությունների դեմ պայքարի աշխատանքներ: Մեր հանդիպման պահին մասնագետները պայմանագրով նախատեսված նվազագույն բերքատվությունն ապահովելու նպատակով դիտարկում էին բույսերի հասունացման վիճակը՝ բերքահավաքի լավագույն ժամկետ սահմանելու համար: Հետագայում համոզվեցի, որ ֆերմերներն անդամակցում են նաև բերքի իրացման, ներդրանքների մատակարարման, վարկային և այլ բնույթի կոոպերատիվների: Իսկ հաշվապահության և հարկերի հաշվառման աշխատանքներն աութսորսինգի սկզբունքով իրականացնում էին այլ մասնագիտացված կազմակերպություններ: Ահա թե ինչպես է ամերիկացի ֆերմերը, իր ընտանիքի անդամների միջոցով և 1-2 սեզոնային աշխատողներ ներգրավելով, կարողանում մշակել 150-200 հա հողատարածություն:

ՀՀ-ում անցյալ դարի 90-ական թվականներին բավական լուրջ հիմնախնդիր էր կաթի մթերումը: Հազարավոր տնտեսություններ, չունենալով կաթի սառեցման և վերամշակման հնարավորություն, առանց սակարկելու, ցածր գնով արտադրանքը հանձնում էին մթերող կազմակերպությունների միջնորդներին: Այս իրավիճակն աստիճանաբար շտկվեց ԱՄՆ-ի Գյուղդեպարտամենտի Մարքեթինգի աջակցության հայաստանյան ծրագրի (ՄԱԾ) ջանքերով: Համայնքներին կաթի սառեցման ագրեգատներ, իսկ վերամշակող կազմակերպություններին՝ կաթի փոխադրման մասնագիտացված ավտոմեքենաներ տրամադրելով՝ ՄԱԾ-ը նպաստեց կաթի մթերման սպառողական կոոպերատիվների

[6] https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/2%20cragir.pdf

կազմակերպմանը: Հետագայում այս փորձն ընդլայնվեց նաև այլ միջազգային կազմակերպությունների, համայնքների ու վերամշակողների ներդրած միջոցներով:

Հաջորդ կարևոր հիմնախնդիրը, որը տեղային լուծում է ստանում կոոպերատիվների հիմնադրմամբ, հեռագնա արոտների օգտագործումն է: Այս արոտավայրերը լիարժեք կերպով չեն օգտագործվում տարբեր պատճառներով, որոնցից հիմնականներն են ճանապարհների անմխիթար վիճակն ու ջրարբիացման համակարգի բացակայությունը: Համաշխարհային բանկի վարկային ծրագրով և ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ՝ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» առաջին և երկրորդ ծրագրերի շրջանակում մի շարք համայնքներում հիմնադրվեցին Արոտօգտագործողների կոոպերատիվներ: Բազմագործառույթ այս կառույցները կոչված են նպաստելու արոտների բարելավմանն ու ջրարբիացմանը, տոհմային անասնաբուծության զարգացմանն ու աշխատանքների մեքենայացմանը, մասնագիտական և խորհրդատվական ծառայությունների մատուցմանը:

Արդյունաբերական գյուղատնտեսության զարգացումը, հատկապես՝ խելացի ջերմոցների և անասնաշենքերի կառուցումը նույնպես գերազանցապես իրականացվում են կոոպերատիվ սկզբունքով: Այս գործում նորամուծական մոտեցումներ ու բազմակողմանի աջակցություն է ցուցաբերում «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» (CARD) հիմնադրամը:

Այդուհանդերձ, իրականությունն այն է, որ ՀՀ-ում գործող գյուղատնտեսական կոոպերատիվների թիվը դեռևս չափազանց սահմանափակ է: Համաձայն ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության 2019 թ. հունվարի 24-ին տրամադրած տվյալների՝ 2016 թ. գրանցվել են 54, 2017 թ.՝ 14, 2018 թ.՝ 7 գյուղատնտեսական կոոպերատիվներ, ընդ որում, գրանցված 75 գյուղատնտեսական կոոպերատիվներից փաստացի գործել է 34-ը[7]:

Ինչպես վերը նշվեց, հատկապես վերջին տարիներին բավական նպաստավոր պայմաններ և նախադրյալներ են ստեղծվել գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման համար: Այսպես՝ 2015 թ. դեկտեմբերի 21-ին ընդունվել է «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքը, իսկ 2016 թ. նոյեմբերի 18-ին՝ «Գյուղատնտեսական կոոպերատիվի անդամների ռեեստրի վարման կարգը և պահանջները սահմանելու մասին» ՀՀ կառավարության N1187-Ն որոշումը, հրապարակվել հանրամատչելի և օգտակար գրականություն[8], իսկ բոլորովին վերջերս ՀՀ կառավարության ընդունած՝ «Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման երկրորդ միջոցառումն» ուղղակի աննախադեպ աջակցություն է նախատեսում: Ուստի պարզապես անընդունելի է, որ գյուղատնտեսությունում ճգնաժամային երևույթները հաղթահարելու փրկօղակը՝ գյուղատնտեսական կոոպերատիվները, դեռևս չափազանց դանդաղորեն են ձևավորվում ու զարգանում:

[7] Հետազոտություն գյուղատնտեսական կոոպերատիվների գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտի և գյուղատնտեսական կոոպերատիվների աջակցության պետական ծրագրի վերաբերյալ, էջ 6, file:///C:/Users/User/Downloads/Agri-Cooperatives_Research_report_0.pdf

[8] Վ. Ուռուտյան, Գյուղատնտեսական կոոպերատիվներ, Միասին աշխատելու օգուտն ու հմայքը, Երևան, 2015 թ., Վ. Ուռուտյան, Ս. Ավետիսյան, Գյուղատնտեսական կոոպերատիվներ, Եր., «Ասողիկ», 2012 թ.:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք:
2. ՀՀ հողային օրենսգիրք:
3. ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2018 թ. ապրիլի 17-ի N92-Ա հրամանը «Գյուղատնտեսական կոոպերատիվներին աջակցության պետական ծրագիրը հաստատելու մասին»:
4. «Գյուղատնտեսական կոոպերատիվի անդամների ռեեստրի վարման կարգը և պահանջները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2016 թ. նոյեմբերի 18-ի N1187-Ն որոշում:
5. «Հետազոտություն գյուղատնտեսական կոոպերատիվների գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտի և գյուղատնտեսական կոոպերատիվների աջակցության պետական ծրագրի վերաբերյալ»:
6. Ռուտյան Վ. , Գյուղատնտեսական կոոպերատիվներ, Միասին աշխատելու օգուտն ու հմայքը, Եր., 2015 թ.:
7. Ուռուտյան Վ., Ավետիսյան Ս., Գյուղատնտեսական կոոպերատիվներ, Եր., «Ասողիկ», 2012 թ.:
8. Дружинин Н., Япония: экономическое чудо, СПб., Питер, 2003.
9. https://armenpress.am/arm/news/974525.html
10. https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/2%20cragir.pdf

Самвел АВЕТИСЯН
Старший эксперт исследовательского центра "Амберд", АГЭУ,
доктор экономических наук, профессор

АГРАРНАЯ ПОЛИТИКА

СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННЫЕ КООПЕРАТИВЫ КАК СПАСАТЕЛЬНЫЙ КРУГ

Прошло почти три десятилетия после аграрной реформы в Армении. Из-за приватизации земли число землевладельцев увеличилось. Однако из-за образования большого количества семейных ферм, фрагментарных участков и земельных участков небольших размеров, были нарушены системы севооборота, ирригации, закупок, логистики, финансового и профессионального обслуживания, понизилась эффективность сельскохозяйственного производства.

Это все усугубляется в Армении, которой присуще малоземелье и ограничен доступ к внешним коммуникациям. В данной статье подчеркивается, что эти проблемы могут быть решены путем создания сельскохозяйственных кооперативов и объединения небольших фермерских хозяйств.

Автор, ссылаясь на международный опыт, раскрывает механизмы решения указанных проблем и преодоления кризисных ситуаций путем сельскохозяйственной кооперации. Анализируются препятствующие факторы и новые условия, способствующие формированию кооперативов.

Ключевые слова: *кооператив, закон, инвестор, консолидация земель, услуги*

Samvel AVETISYAN
Senior Expert at "Amberd" Research Center, ASUE,
Doctor of Sciences (Economics), Professor

AGRICULTURAL POLICY

AGRICULTURAL COOPERATIVES AS A RESCUE CIRCLE

Almost three decades have passed since the agrarian reconstruction in Armenia. Due to land privatization, the number of landowners has increased. However, due to the formation of a large number of family farms, fragmented and small land plots, systems of crop rotation, irrigation, procurement, logistics, financial and professional service were disrupted, and agricultural production decreased.

This is all compounded in a country like Armenia, which has limited access to foreign communications. Therefore, this paper emphasizes that these problems can be solved through the creation of agricultural cooperatives and the unification of small farms.

Referring to the international experience, the author reveals the structures for solving these problems by means of cooperation and overcoming crisis situations. The factors that prevent the formation of cooperatives and the opportunities available in the new conditions are analyzed in this paper.

Keywords: *cooperative, law, investment member, land consolidation, services*